Հայտարարություն

09.11.2021թ. ժամը 12⁰⁰ –ին Մխչյանի համայնքապետարանում /հասցե՝ Մխչյան համայնք, Սունդուկյան-2/ անցկացվելու է Մխչյան համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 03-059-0284-0002 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող, /հողի կարգը՝ 4-րդ կարգ/ 0.46906հա մակերեսով հողամասի վարձակալության բաց մրցույթ:

Վարձակալության ժամկետը սահմանված է 25 տարի:
Վարձակալության վճարի մեկնարկային չափը սահմանված է տարեկան 10.000 /տասը հազար/ ՀՀ դրամ:

Հողամասի օգտագործման նպատակն է՝ գյուղատնտեսական գործունեություն:

Առկա են հաղորդակցության ուղիներ:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ /ներառյալ սերվիտուտներ/ առկա չեն:

Հողամասը օգտագործելու ժամանակ օգտագործողը պարտավոր է պահպանել շրջակա միջավայրը, իսկ պատմամշակութային հուշարձաններ հայտնաբերելու դեպքում անմիջապես տեղեկացնել իրավասու մարմիններին:

Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար վճարի անդորրագիր և անձնագիր: Մասնակցության հայտերն ընդունվում են մինչև 04.11.2021թ. յուրաքանչյուր աշխատանքային օր՝ աշխատանքային ժամերին: Մրցույթի հայտերը ներկայացնում են սոսնձված և ստորագրված ծրարով:

Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և 2(երկու) կրկնօրինակներից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը:
Մրցույթի մասնակիցները լոտին կարող են ծանոթանալ մինչև մրցույթի անցկացման նախորդ օրը՝ յուրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00:

Մրցույթի մասնակիցները մրցույթին մասնակցելու համար մուծում են նախավճար,որը կազմում է 500(հինգ հարյուր) ՀՀ դրամ: Նախավճարը մուծվում է մրցույթի անցկացման օրը՝ կանխիկ կարգով:

Մրցույթի կանոնակարգին ծանոթանալու համար դիմել Մխչյանի համայնքապետարան: Կանոնակարգի պատճենները տրամադրվում են պատճենահանման համար կատարված ծախսերի դիմաց վճարելուց հետո:

Մրցույթի հայտերը բացվելու և ամփոփվելու են 09.11.2021թ. ժամը՝ 12:00:

Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը: